Հաստատված է
«Ճարտարապետության և շինարարության
Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի
գիտական խորհրդի 2023 թ. հունիսի 9-ի նիստում
Արձանագրություն №01-06-23
Գիտական խորհրդի նախագահ, ռեկտոր՝
Ե.Վ.Վարդանյան

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
«ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԵՏԱԶՈՏՈՂՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ

Ի.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի (այսուհետ՝ Համալսարան) երիտասարդ հետազոտողների միավորումը (այսուհետ՝ Միավորում) Համալսարանի 35 տարին չլրացած երիտասարդ գիտնականներին, գիտաշխատողներին, դասախոսներին, հայցորդներին, ասպիրանտներին և գիտական գործունեությամբ հետաքրքրվող ուսանողներին (այսուհետ՝ Երիտասարդ հետազոտողներ) համախմբող, հասարակական հիմունքներով գործող կազմակերպություն է, որը գործում է Համալսարանի կանոնադրության և սույն կանոնակարգի հիման վրա:

2. Սույն կանոնակարգով սահմանվում են Միավորման գործունեության նպատակն ու խնդիրները, գործառույթները, կառուցվածքը, կառավարումը և Միավորման գործունեության հետ կապված այլ հարցեր:

3. Միավորման կազմում կարող են ընդգրկվել կամավորության սկզբունքով՝ դիմումի հիման վրա:

4. Միավորումն ունի խորհրդանշան, ձևաթուղթ և անհատականացման այլ միջոցներ:

5. Միավորման գործունեությանն աջակցելու նպատակով Համալսարանի բյուջեում կարող են նախատեսվել միջոցներ՝ հրատարակչական աշխատանքների, գիտական միջոցառումների կազմակերպման և սույն կանոնակարգից բխող այլ խնդիրների լուծման համար:

6.Միավորման անվանումն է՝

հայերեն – ««Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի երիտասարդ հետազոտողների միավորում»

կրճատ՝ ՃՇՀԱՀ ԵՀՄ,

անգլերեն -«Union of Young Scientists of the National University of Architecture and Construction of Armenia»,

կրճատ՝ UYS NUACA,

ռուսերեն՝ «Союз молодых ученых национального университета архитектуры и строительства Армении»,

կրճատ՝ СМУ НУАСА:

II. ՄԻԱՎՈՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

7. Միավորման նպատակն է գիտահետազոտական գործունեությամբ զբաղվող երիտասարդների ուժերի համախմբումը, համագործակցության ապահովումը, գիտական նախաձեռնությունների համակարգումը և սատարումը:

8. Միավորման խնդիրներն են՝

1)աջակցությունը Համալսարանում իրականացվող գիտահետազոտական և փորձարարական ծրագրերում երիտասարդների ընդգրկվածությանը, նրանց հետազոտությունների հրատարակմանը, դրանց արդյունավետության բարձրացմանն ուղղված ծրագրերի իրականացմանը,

2) երիտասարդական գիտաժողովների, սեմինարների և գիտահետազոտական այլ ուղղվածություն ունեցող միջոցառումների կազմակերպումը և իրականացումը՝ համագործակցելով Համալսարանի գիտության վարչության հետ,

3) Հայաստանի Հանրապետության և արտերկրի գիտահետազոտական միավորումների և այլ կազմակերպությունների հետ կապերի ստեղծումը, տեղեկատվության և փորձի փոխանակումը:

III. ՄԻԱՎՈՐՄԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԱՆԴԱՄՆԵՐԸ

9.Միավորման գործունեությունը համակարգող մարմիններն են՝

1) Միավորման անդամների ընդհանուր ժողովը,

2) Միավորման խորհուրդը,

3) Միավորման ղեկավարը,

4) Միավորման ոլորտային խմբերի համակարգողները

10. Միավորման անդամների ընդհանուր ժողովը գումարվում է տարեկան առնվազն մեկ անգամ: Անհրաժեշտության դեպքում ժողովը կարող է գումարվել Միավորման ղեկավարի, ոլորտային խմբերի համակարգողների կամ Միավորման

անդամների առնվազն 1/3-ի նախաձեռնությամբ: Ընդհանուր ժողովն իրավազոր է Միավորման անդամների 2/3-ի մասնակցության դեպքում:

11.Միավորման ընդհանուր ժողովը՝

1) Հաստատում է ժողովի օրակարգը,

2) քննարկում և ընդունում է Միավորման կանոնակարգը, դրա փոփոխությունները, լրացումները և ներկայացնում է Համալսարանի ռեկտորին և գիտական քարտուղարին՝ սահմանված կարգով հաստատելու համար,

3) քննարկում և գնահատում է Միավորման ղեկավարի և ոլորտային խմբերի համակարգողների հաղորդումները (հաշվետվությունները) հաշվետու ժամանակաշրջանում իրականացրած գործունեության մասին,

4) քննարկում և հաստատում է Միավորման տարեկան գործունեության ծրագիրը,

5) ընտրում է Միավորման ղեկավար և ոլորտային խմբերի համակարգողներ՝ 3 տարի ժամկետով, բաց քվեարկությամբ, ժողովի մասնակիցների պարզ մեծամասնությամբ: Ընտրությունների արդյունքները հաշվառում և դրա վերաբերյալ արձանագրությունը կազմում է 3 անդամից կազմված ձայներ հաշվող հանձնաժողովը, որն ընտրվում է ժողովի մասնակիցների կողմից, ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայներ հաշվող հանձնաժողովի կազմից ընտրվում է նախագահ: Ընտրությունների արդյունքների վերաբերյալ հանձնաժողովի արձանագրությունը հաստատվում է ժողովի որոշմամբ:

12.Միավորման խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) կազմում ընդգրկվում են Միավորման ղեկավարը և ոլորտային խմբերի համակարգողները, ինչպես նաև քարտուղարը: Քարտուղարը նշանակվում է Միավորման ղեկավարի կողմից: Քարտուղարն արձանագրում է Ընդհանուր ժողովը, Խորհրդի նիստերը և ապահովում է Միավորման փաստաթղթաշրջանառությունը,

13.Խորհուրդն իր գործունեությունը կազմակերպում է նիստերի միջոցով, որոնք գումարվում են ըստ անրաժեշտության, բայց ոչ պակաս, քան կիսամյակի ընթացքում երկու անգամ:

14.Խորհուրդը.

1) հաստատում է իր աշխատակարգը,

2) մշակում է ոլորտային խմբերի և Միավորման գործունեության տարեկան ծրագրերն ու ներկայացնում ընդհանուր ժողովի հաստատմանը,

3) համախմբում է երիտասարդ գիտնականներին և մասնագետներին, աջակցում նրանց գիտական աշխատանքների հրատարակմանը,

4) հավաքագրում և տարածում է միջազգային և տեղական գիտական ծրագրերի մասին տեղեկատվություն, աջակցում երիտասարդ մասնագետների մասնակցությանը հանրապետական և միջազգային գիտական միջոցառումներին,

5) աջակցում է Համալսարանի ասպիրանտուրայի դիմորդներին, գիտաժողովների մասնակցության հայտատուներին, գիտակրթական ծրագրերի և այլ միջոցառումների մասնակիցներին,

6) լուսաբանում է երիտասարդ գիտնականների կատարած աշխատանքները, խրախուսում լավագույններին,

7) պլանավորում և ստեղծում է համատեղ հետազոտությունների իրականացման համար տարբեր ֆակուլտետների երիտասարդ գիտնականներից բաղկացած խմբեր, կազմակերպում է դրանց աշխատանքը,

8) Համալսարանի գիտության վարչության հետ համատեղ կազմակերպում է երիտասարդ հետազոտողների գիտաժողովներ, դասախոսություններ, սեմինարներ, ամառային դպրոցներ, բանավիճային ակումբներ և գիտության հետ առնչվող այլ միջոցառումներ,

9) քննարկում է ոլորտային խմբերի համակարգողների և Միավորման անդամների կողմից ներկայացված հարցեր,

10) կազմավորում է Միավորման կողմից իրականացվող միջոցառումների կազմակերպման պատասխանատու հանձնախմբեր,

11)իրականացնում սույն կանոնակարգից բխող այլ լիազորություններ,

12) քննարկված հարցերի վերաբերյալ ընդունում է որոշումներ:

15.Միավորման ղեկավարը.

1)կազմակերպում է Միավորման ընթացիկ գործունեությունը, Խորհրդի աշխատանքները, հրավիրում և վարում է Միավորման անդամների ընդհանուր ժողովը, խորհրդի նիստերը,

2) մինչև ընդհանուր ժողովի հաստատմանը ներկայացնելը, Խորհրդին հավանությանն է ներկայացնում տարեկան հաշվետվությունը, այդ թվում՝ նախատեսված և կատարված ծախսերի վերաբերյալ,

3) ապահովում է ընդհանուր ժողովի և Խորհրդի որոշումների կատարումը,

4) ներկայացնում է Միավորմանը ներհամալսարանական և արտահամալսարանական հարաբերություններում, պաշտպանում է Միավորման շահերը և պատասխանատվություն կրում աշխատանքների արդյունավետության համար:

16.Միավորման ղեկավարն այդ կարգավիճակում կարող է ընտրվել ոչ ավել, քան երկու անգամ՝ պայմանով, որ այդ կարգավիճակում աշխատելիս լրացած չլինի նրա 35 տարին:

17.Միավորման ոլորտային խմբերի համակարգողները.

1) համակարգում են ոլորտային հետազատական աշխատանքները, ինչպես նաև աջակցում են միջոլորտային և (կամ) երկակի նշանակության հետազոտությունների

իրականացմանը՝ ապահովելով փոխադարձ շփումներ և քննարկումներ տարբեր ոլորտների հետազոտողների միջև,

2) Խորհրդի քննարկմանն են ներկայացնում առաջարկություններ ինչպես ոլորտային, այնպես էլ միջոլորտային հետազոտությունների թեմաների վերաբերյալ,

3) ապահովում են Խորհրդի որոշումների կատարումը,

4) ըստ անհրաժեշտության կազմավորում են առանձին մասնագիտությունների գծով աշխատանքային խմբեր,

5) Խորհրդի քննարկմանն են ներկայացնում Միավորմանն անդամակցելու դիմումները:

18.Միավորման կազմում գործում են հետևյալ ոլորտային խմբերը.

1) ճարտարապետություն,

2) տեխնիկական գիտություններ (շինարարություն և հարակից ոլորտներ),

3) դիզայն,

4) տնտեսագիտություն (շինարարության ոլորտում),

5) կառավարում (ճարտարապետության, շինարարության, դիզայնի, զբոսաշրջության ոլորտներում):

19.Ոլորտային խմբերի կազմում կարող են կազմավորվել առանձին մասնագիտությունների գծով աշխատանքային խմբեր:

20.Միավորման անդամը կարող է ցանկացած պահի դադարեցնել իր անդամակցությունը՝ դիմումի համաձայն:

21. Միավորման անդամակցությունը կարող է դադարեցվել նաև Միավորման անդամի կողմից ոչ պատշաճ վարքագծի դրսևորման դեպքում: Միավորման անդամի ոչ պատշաճ վարքագիծը՝ ոլորտային խմբի համակարգողի ներկայացմամբ, գնահատում է Խորհուրդը:

22.Միավորման անդամն իրավունք ունի՝

1) ստանալ տեղեկատվություն Միավորմանի գործունեության մասին,

2)մասնակցել Միավորման կազմակերպած բոլոր միջոցառումներին, այդ թվում՝ ոլորտային խմբերի և Խորհրդի նիստերին, միավորման ընդհանուր ժողովին,

3) արտահայտել կարծիք և ներկայացնել առաջարկություններ,

4) ընտրել և ընտրվել Միավորման մարմիններում:

23.Միավորման անդամը պարտավոր է՝

1) զբաղվել գիտահետազոտական գործունեությամբ,

2) մասնակցել և օժանդակել Միավորման նպատակների իրականացմանը և խնդիրների լուծմանը,

3) կատարել Միավորման կանոնակարգի պահանջները,

4) մասնակցել ոլորտային խմբերի նիստերին, խորհրդի օրակարգային հարցերի քննարկումներին և կատարել Խորհրդի մարմինների որոշումներից բխող հանձնարարությունները:

V.ՄԻԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

24.Միավորման գործունեությունը կարող է դադարեցվել Համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

VI. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

25.Սույն կանոնակարգը հաստատվում, փոփոխվում և լրացվում է Համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ:

26.Սույն կանոնակարգն ուժի մեջ է մտնում Համալսարանի գիտական խորհրդի որոշումը Համալսարանի ռեկտորի կողմից հաստատվելուց հետո 10-րդ օրը:

Գիտական քարտուղար՝ Լ.Հ.Լևոնյան

,,09,,հունիսի, 2023թ.

Գիտխորհրդի որոշում N°01-06/23